

ՔԷՎԱՅԻՆՆԵՐԸ ԿԱՄ ԲԱՐԻՋՄ՝)

Պատմական տեսութիւն

18. 1850 թուականի մայիսին Ջէնջանի կառավարիչ Ամիր Ասլան խանը մոնեհտիկով հրաման արձակեց, որ միւթէշարինները շոկուհն բաբիններից, որով քաղաքը երկու մասի բաժանուեց. գետի մի կողմը հաւաքուեցան Շիանները, միւսում՝ Բաբինները։ Սոսկալի էր ճգնաժամը, քոյրը՝ որդուց, քոյրը՝ եղբորից, եղբայրը՝ եղբորից, կինը՝ մարդուց, աղջիկը՝ ծնողներից բաժանուեց և իրար հակառակ զինուեց։ Երբ թշնամական դիրք բռնեց կառավարիչը, բաբինները մտան իրենց թաղին կից աւերակ «Ալի-մարգան—խանի» բերդը, իսկոյն նորոգեցին, ամրացրին, փոքրիկ մարտկոցներ շինեցին կառավարչական ոյժի դիմադրելու համար։ Այստեղ էլ շիա միւթէշիդները «Ջհադ» հրատարակեցին, այնպէս որ ամբոխն էլ միացած զօրքին մարտնչում էր իւր եղբայր—քոյր բաբինների դէմ։ Թէև զօրքն ու զօրականները անվերջ բողոքում էին, երբ նկատեցին հակառակորդների հերոսական դիմադրութիւնը, թէ չեն ցանկանում իրենց հարազատների դահիճները դառնալ, թէ իրենց հաճելի չէ անմեղների արիւնը թափել և հաւատացեալներին, մարգարէի շառաւիղից սերուածներին Շիւքրի նման կոտորել, բայց կառավարութիւնը փոփոխում էր զօրականներին էլ, զօրքերին էլ, որ ջնջէ նորադանդներին։ Ամենից դաժան դահիճներ դարձան Գերուաի զնդի զօրականներն ու զօրքերը, որոնք դաժանաբար կոտորում, կողոպտում էին թշուառներին, անխտիր ծերին էլ, մանուկին էլ, էգին էլ որձին էլ։ Բաբինները համոզուած լինելով, որ պիտի աւարէին իրենց գոյքը, գերի պիտի վարէին իրենց կիներն ու աղջիկները, անխնայ պիտի կոտորէին իրենց ամենավերջին զինակիրին, միասիրտ, միահոգի, իրար թնկութիւնը դարձած ինն ամիս դիմադրեցին։ Բոլորի գոյքը, մթերքը գիղել — հաւաքել էին մի տեղ, ամեն մարդ օգտուեց էր ընդհանուրի հարստութիւնից, ամեն բան հասարակական էր և ամենքը միայն

մտածումէին ընդհանուրի շահի և իրենց զաղափարի իրագործման համար, կրնան անգամ չէին ուզում ետ մնալ իրենց այրերից, ոչ միայն պատրաստումէին կոռուտների պէտքերը, այլ կարևոր դէպքերում յարձակումէին թշնամիների վրայ:

Զէնջանի ժաննա Դարժը — տղամարդի շորեր հագած և Ռուսթէմ Ալի անունն ընդունած այնպիսի հերոսական կռիւներ մղեց Պարսկիների դէմ, այնպէս անվեհեր կերպով ընկնում էր շիաների, ժանաւանդ գերուսների դէմ և կոտորում էր նրանց, որ այդ դեռահաս կնոջ երևոյթը սարսափ էր սփռում, շանթահարում էր բոլորին և ցրւում: Այս քաջամերտ կինը իւր խիզախ յարձակումներով այնպէս էր բորբոքել բանակի զօրականներին, որ թակարդ մտած, մի անգամ յարձակման ժամանակ, նորան գնդակահար արին:

19. Թէև կառավարութիւնը հետզհետէ զօրքի թիւը հասցրեց երեսուն հազարի, տասնը իննը թնդանօթով, բայց արիւմտար մարտնչող բաբինները անխնայ նրանց կոտորում և ցրւում էին: Բազմաթիւ Ղարազաղցի և աֆշար ձիաւորներն անգամ երես էին շուռ տալիս, փախչում բաբինների յուսահատական կռիւներից: Եօթը — ութը ամսի կռիւը վերջապէս սպառեց բաբինների ոյժը, որոնց թիւը 1800 հոգիից աւելի չէր, իսկ դրանց կիսից աւելին էլ արդէն քաջութեամբ ընկել էր, հաւաւոր զոհ տանելով հակառակորդներից: Իսկ երբ մի ուղւորից վիրաւորուեց, մեռաւ հէօջաթը, բաբիններին տիրեց յուսահատութիւնը: Զէնջանի կառավարիչը և զօրքի հրամանատարը Ղուրանի վրայ երդուեցան, կնքեցին և ուղարկեցին բաբիններին, հաւատացնելով որ կառավարութեան նպատակը հէօջաթին կալանաւորելն էր, ժողովրդի հետ գործ չունի: Նրանք երդումով խոստացան, որ ժողովրդին, մարտնչոյններին ոչ մի վնաս չեն հասցնի, եթէ անձնատուր լինեն և գէնքերը յանձնեն: Թէև բաբինները համոզուած էին, որ շիաները չէին յարգելու իրենց երդումը, բայց անվերջ անձրևների նեղութիւնը, վերահաս ձմեռուայ ցուրտը, մթերքի սպառումը, մանուկների մրմունջները նրանց գլորեցին իրենց թշնամու գիրկը, որն անխնայ կոտորել տուեց այրերին, յափշտակեցին գոյքի մնացորդը, մինչև անգամ տների ծածկը քանդեցին, տարան, մանուկներին ոտքերի տակ տրորեցին, ծծկեցնեցին սրերի ցեցերին, մանկահաս աղջիկներին, տղաներին, կիներին գերեցին, զարհուրելի տանջանքների ենթարկելուց յետոյ, որբերին, այրիներին և անպէտքներին վարեցին Շիրազ: Միջթէհիդի տանը ապաստանած հարիւրաւոր մանկահաս աղջիկներին, կիներին զարհուրելի տանջանքների մատնելուց,

հազի արժեքաւոր հազուստներն անգամ հանելուց յետոյ, ցնցոտների մէջ պլած ճանապարհեցին, ցրուեցին....

20. Մազանդարանի, Նէյրիզի կոտորածներէից բորբոքուած Հաջի-Միրզա Աղասին՝ Իրանի սարսափների հրամանակալ վէզիրը հրաման ուղարկեց Թաւրիզ, որ Մաքուից Ձէհրիբ տեղափոխեն Բաբին, քուրդ բէգերին յանձնեն, խստիւ հսկեն նրան, քանի որ այդ խիղախ քարոզչի ձեռագործները համնում էին մինչև անգամ Իրան շահնշահի պալատը և պղտորում մտքերը: Բայց Բաբի լեզուն, վարքը, քարոզութիւններն ու աւետիսները դիւթում էին շրջապատողներին: Արեւելեան բռնակալների ճնշումներից ընկճուած ամեն մի պաշտօնակալ, թէ ստորադրեալ հոգեւով պաշտում էին այդ վերանորոգչին, որը սէր, միաբանութիւն, համերաշխութիւն, հաւասարութիւն, անկախութիւն, կարեկցութիւն և որ ամենագլխաւորն է ազատութիւն էր քարոզում և հաւատացնում էր, թէ շուտով ամենակալի զօրութիւնը երևելու է աշխարհին, որ հաստատէ կարգերը և գործադրէ այդ բոլորը: Ուրմիի կառավարիչն էլ, Ձէհրիբի բերդապահն էլ, զինուորն էլ, ժողովուրդն էլ մեծ հաճոյքով ուղղում էին ծառայել այդ մարգարէին, փափագելով օր առաջ հասնել քարոզութեան կատարուածին և գաղտնապէս կարեւորյն չափ նրան օգնում: Բաբի հռչակն հասել էր մինչև Հնդկաստան, որտեղից անգամ այցելուներ էին գալիս նրան տեսութեան, իսկապէս նրա շրթունքից լսելու այդ քարոզները: Բայց կառավարութեան լրտեսների հսկողութիւնն էլ այնքան սաստիկ էր, սոված պաշտօնեաների, մանաւանդ ստորին ծառայողների ընչաքաղցութիւնը այնքան մեծ էր, որ մի անգամ Բաբին այցելող մի հնդիկի, մի դէվրիշի և մի սէիդի կալանաւորեցին, կողոպտեցին, ծեծի տակ մէկին սպանեցին, միւսներն էլ հազիւ կարողացան ճողովքել դահիճների ճանկից: Հաջի-Միրզա-Աղասին այնքան սարսափում էր Բաբի անուանից, որ ամէն պոստի նորանոր հրամաններ էր արձակում Ատրպատականի կուսակալին, Ձէհրիբի հրամանակալին, խիստ հսկելու Բաբի վրայ, նրան կտրել աշխարհից, խզել յարաբերութիւնները:

21. Վերջապէս գործն այնտեղ հասաւ, որ Հաջի-Միրզա-Աղասին մի նոր հրամանագրով հրամայեց Ատրպատականի կուսակալին, Ձէհրիբից Թաւրիզ փոխադրել Բաբին և դատաստանի մատնելով գոյութիւնը ջնջել: Բաբին բերին Թաւրիզ, բայց կառավարութիւնը առանց կղերի միջամտութեան չէր կարող այդպիսի մի նշանաւոր Սէիդի սպանել, իսկ միւթէշարի կղերը ձեռնպահ մնաց, չուզեցան մի այդպիսի

անձնաւորութեան դատապարտութեան մասնակցելու կուտակալը մնացել էր շուարած, նա անճարացած դիմեց Շէյխի միւլթէհիդներին, որոնք բորբոքուել էին, թէ ինչպէս այդ երիտասարդը կարողացել էր իրենց ընկերակից այնքան նշանաւոր իւլէմաների դիւթել և իրեն կողմը դարձնել: Թաւրիզում Միր-Ալի-Ասկէր Շէյխ-Իւլ-Իսլամը նրան դատի կանչեց իւր բնակարանում, որտեղ հաւաքուած էին բոլոր շէյխի իւլէմաները: Երբ դռնից ներս մտաւ, դաշիճուած նրա համար տեղ չէին թողել, այնպէս որ Բաբը պարտաւորուած «Սէլամ»-ը տուեց և նստեց շէմի վրայ: Շէյխ-Իւլ Իսլամի հարցերին աներկիւղ պատասխանելով նա կրկնեց, թէ ինքն է այն դուռը, որտեղից աշխարհին պատգամներ է գալիս, ինքն է այն հոգին, որին սպասում են միւսլիմները: Շէյխ-Իւլ-Իսլամը հրամայեց, որ բերանին-շրթունքներին խփեն և լռեցնեն, բայց ոչ ոք չյանդգնեցաւ պաշտօնակալներից թէ ֆարրաշներից այդ հրամանը կատարել: Շէյխ-Իւլ-Իսլամը անճարացած ինքը վեր ելաւ, թակեց և մի սիւնի կապելով սաստիկ ձաղկեց կալանաւորին: Այնպէս սարսափ էր սփռել, այնպիսի ակնածութիւն ունէին պարսիկները Բաբի մասին, որ ոչ ոք չյանդգնեց Շէյխ-Իւլ-Իսլամին աջակցել, կառավարչական պաշտօնակալներն էլ սարսափած նրան ետ ուղարկեցին Չէհրիք:

22. Բաբի հռչակն այնպէս է սփռուած ամբոխի մէջ, ամբողջ Պարսկաստանում նրա մասին այնպիսի առասպելական պատմութիւններ է տարածուած, ժողովուրդը այնպիսի հաւատքով է դիմում և վերաբերում, որ մարդ գօտար թէ կարողանայ հաւատալ, եթէ աչքով չտեսնի և ականջով չը լսէ ժողովուրդից դրանց մանրամասնութիւնները: Թէև կենտրոնական վարչութեան կարգադրութեան համաձայն Սէիդ-Ալի-Մէհմէդին ծպտեալ բերին Իսֆահանից Թաւրիզ-Մաքու, բայց ամէն տեղ ժողովուրդը նրան ընդառաջ էր դուրս գալիս, հիւանդներ էին բերում, որ բուժէ, ցաւագարների համար աղօթք էին խնդրում և ամէն մարդ կարողացածի չափով աշխատում էր նրան հաճելի դառնալ: Ոմանք ուտելիք էին բերում, ուրիշը խմելիք, հագնելիք և բոլորն էլ ջանում էին նրան տանող պաշտօնակալներին գրաւել, որ արժանաւոր յարգանքով նրան հասցնեն աքսորավայրը: Քանի՜ քանի՜ անգամ աշխատեցան նրան յափշտակել, պաշտօնեաների ձեռքից ազատել, բայց նա չյօժարեց դիմադրել իշխանութեան, որը նրան տանջանքի էր մատնել: Դեռ մինչև այսօր Չորս գիւղում, Մաքուի մօտերը, շիշերի մէջ պահում են Բաբի երեսը լուացած ջուրը, որը

որպէս «հրաշալի-դեղ» տալիս են վտանգաւոր հիւանդներին կաթիլներով: Տան գանձը, անդրանիկներին այնքան խնամքով չեն պահում, ինչպէս այդ շիշերի ջուրն են պահում, որը տրւում է ամենակարեւոր դէպքերում մի մի կաթիլ: Խոյի մօտերից անցած ժամանակ Բաբին դիմաւորեց մի թշուառ հայր, խնդրելով որ իր մինուճար հիւանդ աղջկան փրկէ: Բաբը խղճալով ծերունի հօրը աղօթեց և աղքերակից մի գաւաթ ջուր վերցնելով, կէսը խմեց, կէսն էլ տուեց հօրը, որ տանի աղջկան ասելով. — Ես խնդրեցի ամենագլխածից, որ օգնէ քո աղջկան, տար այս ջուրը, թող խմէ ու վեր կենայ: Հաւատացնում են, որ աղջիկը գաւաթի ջուրը խմել և ոտքի է ելել անկողնից: Այսպիսի անթիւ դէպքեր են պատմում, բայց սրանց քարոզութիւնը թէ Բաբից և թէ Բէհայից խստիւ արգելուած լինելով բաբիներին, չի կարելի մամոռլութեամբ հաւաքել: Խոյի միւլդէհիդի Մուլա-Իսքէնդէրի աղջիկը թոքախտով վարակած մահուան անկողնում տառապած ժամանակը, կողմնակի ճանապարհով դիմում են բերդի բանտարկեալին՝ Բաբին, և խնդրում, որ աղօթէ և մի նշան տայ աղջկան փրկելու: Կալանաւորը աղօթում է և ուրիշ բան չունենալով արաղշինը (գտակ) տալիս է, որ դնեն աղջկայ գլխին: Աղջիկը առողջանում է, կաղդուրւում և դրանից յետոյ երեսուն երկու տարի ապրելով դառնում է Բաբի եռանդուն քարոզիչը իւր սեռի շրջանում: Մինչ այսօր որպէս մի նշանաւոր «հրաշալիք» պահւում է այդ գտակը և դրւում է ծանր հիւանդներին: Չէհրիք եղած ժամանակ, խաներից չորս հոգի որոշում են հետի գնալ «Հազրաթի-Սահաբին» (քրդերը այսպէս էին կանչում Բաբին, տեսնելու և ճանապարհ են ընկնում: Չորս-հինգ փարսալս ճանապարհ կտրելու վարժուած չը լինելով, իջնում են մի քարվանսարայ հանգստանալու: Այստեղ նրանք խօսում են, թէ այդքան յոգնածութիւնից յետոյ, ինչպէս կարող են մնացեալ 3 փարսաղ ճանապարհը շարունակել հասնել Չէհրիք: Մինչև նրանք թէյները խմելը երեք քուրդ են գալիս և չորս ձի բերելով ներկայացնում են ուխտաւորներին և ասում են. — «Հազրաթը սահաբը» զրկեց ձեզ, ասաց, որ դուք հէլբէթ չէք կարող ոտքով այսչափ ճանապարհ կտրել: Ուխտաւորները շուաբած հեծան ձիերը և գնացին երկրպագելու «Հազրաթը—սահաբին»: Բայց հաւաքածներէցս ամենազարմանալին այս է. մի օր Մաքուի խանը առաւօտ վաղ գնում է տեսնելու իւր կալանաւորին, որը բերդում, ապառաժի գլխի զօրանոցում էր բանտարկուած: Յանկարծ ճանապարհի կիսին դառիվայրի վրայ

ապշած, անշարժանում է Ալի խանը, երբ նկատում է Մէիդ—
ալի—մէհմէդին առուակի մօտ լուացելիս — Մի վախենալ, Ալի—
— խան, ասում է Բաբը, ինձնից քեզ Պլաս չի կարող հասնել։
Ուղեցի այսօր քեզ ապացուցանել, որ ես ոչ քո, ոչ էլ քո
իշխանաւորի կալանաւորը չեմ, այլ այստեղ մնում եմ միայն
Տիրոջ կամբը կատարելու համար։ Բարձրացիր բերդը և
պիտի համոզուիս։ Ալի-խանը դողալով բարձրանում է, տես-
նում է, որ զինուորները նստած են պահականոցի առաջը, փա-
կանքով էլ կապուած է Բաբի բանտի դուռը։ Զինուորները բա-
ցում են դուռը և մնում են շուարած։

Համանման արկածներից և բժշկութիւններից Մէիդ Միր-
զա Մէհթին արձանագրում է երեք հազար դէպք և ներկայաց-
նում է Բաբին ընտրում, կալանաւորը հրաժայում է մէկ մէկ
բոլորը կարգալ։ Երբ Մէիդ-Մէհթին աւարտում է ընթերցումը,
ասում է։

— Ափսոս, շատ ես տանջուել, անչափ ես յոգնել, մինչև
այդ բոլորը հաւաքել ու արձանագրել ես։ Բայց ցաւում եմ,
որ քեզ մեծ տհաճութիւն պիտի պատճառեմ։ Տնը, այդ բոլոր
գրածդ լուծ, դրանց հետքն անգամ չմնայ այդ թղթի վրայ։
Ես հրաշք գործելու ոչ իրաւունք ունիմ, ոչ էլ կարողութիւն,
այդ բոլորը Տիրոջ ողորմութեամբ կատարուած դէպքեր են։
Այդպիսի գրուածները և պատմութեանը ընթերցողներին և
հաւատացեալներին կարող են մոլորութիւններէ մէջ մղել և
տարակուսանքներ առաջացնել, գայթակղեցնել։ Իմ իրաւունքս
միայն շրթունքներիցս թռած խօսքն է, Աստուծոյ բանն է,
իսկ հետևորդներս պիտի հաւատան քարոզութիւնս միմիայն
գրչիցս արտագրուածներով։ Հրաշքի դարն անցաւ, մտքի դարը
պիտի թաքաւորէ, գաղափարը պիտի յաղթանակէ։ Այնպէս
մաքուր լուս այդ գիրքդ, որ թուղթը գոնէ քեզ պէտք գայ։

23. Նասր-էդդին շահը գահ բարձրանալուց յետոյ, երկրի
շփոթութիւնները դադարեցնելու նպատակով, խիստ հրաման
ուղարկեց Թաւրիզ յատուկ պաշտօնակալներով, որպէս զի դա-
տեն և մահուան դատապարտելով վերջ տան Բաբի բարոգու-
թիւններին, որը եօթը տարուան ընթացքում այնքան կոտո-
րածների, ծախսերի և խռովութիւնների պատճառ էր դարձել։
Բաբին կրկին Թաւրիզ բերին։ Միւթէշարի կղերը յամառած
չուղեցին կառավարութեան ձեռքին գործիք դառնալ և Ալիի
ու Յաթիմէի սերնդից շառաւիղած այդ քարոզչին մահի են-
թարկել։ Ատրպատականի կուսակալ Շահգադա Համզա Միրզան
Պիղատոսի նման ձեռները լուաց, կրկնելով թէ—«Ինքը ոչ մի

յանցանք չի տեսնուած այդ մարդու ընթացքի մէջ»։ Շէյխի կղերի աւագագոյնը՝ Մամադանցի Մուլա-Մէհմէդը, որպէս զի հաճոյանայ կառավարութեան, միւթէշարիւնների հալածանքից ազատուի, կառավարութեան հաւատարմութեան և համարումին արժանանալով որոշ դիրք ստեղծի իւր և հետեւորդները համար, վճիռ տուեց, թէ «Մէհդ-Ալի-Մէհմէդը, որ ժողովրդից պահանջում է իրեն Մէհթի դաւանել, ճշմարտութեան դուռ ընդունել, իւր գրքին հետեւել, խօսած այդ սուտերի և հայոյութեան համար մահապարտ է, սպանութեան արժանի»։

1850 թուականի յունիսի 27-ին (28 Շաբան 1266 թ.) կէսօրից առաջ Թաւրիզի Ջաբախանալու Բաբին և նրա աշակերտին Միրզա Մէհմէդ Ալի Թաբրիզցիին պատից չուանով կապկպած կախեցին. վերել Մէհդ-Ալի-Մէհմէդին, սրա ոտքերի տակ աշակերտին։ Ասորի գնդից արձակուած գնդակներից ոչ մէկը չը դիպաւ սրանց մարմնին, այլ չուանները կտրտելով վար ինկան։ Դահիճները ժօտեցան մի քանի հարուած տուին և գլխի կանաչ ապարօշը վար գլորեցին ասելով, թէ—«Այս ապարօշները (սէիդական) փրկեցին ձեր կեանքը և կրկին կապեցին երկուսին էլ, կախեցին նոյն պատից։ Որոհու գնդի զինուորներին հրամայեցին կրակել, որոնց գնդակներից երեքը խրուեցան Բաբի սիրտը, մի քանիսն էլ աշակերտի կուրծքը, ընկան գետին»՝ քարոզութեան եօթերորդ տարուած։ Նոյն իրիկունը Ռուսական կօնսուլը՝ Սանիկովը դիակներից (ակուարել) ջրանկարեց սպանուածների պատկերը։

24. Երկու օր դիակները մնացին հրապարակուած և երկրորդ գիշերը պալատական սենեկապան Հաջի Սիւլէյմանխանի օգնութեամբ Բաբի հետեւորդները նրանց դիակները վերցրին, յատուկ սնդուկների մէջ ամփոփեցին և հեռացրին քաղաքից։ Այդ ոսկերտութիւնը ապահովութեան համար երկար ժամանակ պահուեցան իրանի զանազան քաղաքներում և աւաններում, վերջապէս 1900 թ. փոխադրեցին Աքքէա, ուր թաղեցին Կարմէլ լեռան լանջին յատկապէս նրա համար կառուցուած տաճարում, որը դեռ աւարտած չէ։ Բաբի հետ կալանաւորուած նրա միւս երկու աշակերտները, որ իրենց վարդապետի յատուկ հրամանի համաձայն նրան ուրացել էին դատաւորների առաջ, ազատուեցան կապանքներից և իրենց օրէնսդրի գրուածների սնդուկները, իրենց բովանդակած կարեւոր թղթերով և գրուածներով, նրանց դրուած յատուկ հրամանի համաձայն տարան Թէհրան յանձնեցին Բէհաին։ Այս թղթերը ապա փոխադրուեցան Բաղդադ, այնտեղից Կ. Պոլիս, Ադրիանապոլիս

և Աքէա՝ Բէհաի փոքր եղբայրը Կիպրոս աքսորուած ժամանակ
 եղբորից պահանջեց այդ թղթերը, Բէհան հրամայեց արկղները
 բոլոր պարագաներով յանձնել եղբօրը՝ Էզէլի պատգամաւորին,
 որոնք տարան Կիպրոս, որտեղ և մինչև այսօր պահուում է:
 Բաբի շրթները դադարեցին քարոզելուց, նրա մատներից
 ընկաւ գրիչը, բայց այս գրութիւնները ցրուելով Իրանի և
 Թուրանի ամէն կողմը, նրա սպանութիւնից յետոյ, աւելի
 մեծ թուով հետևորդներ գտան, որոնք սփռուած ամէն կողմը,
 մահուան դէմ կռուելով տարածեցին իրենց վարդապետութեան
 թագաւորութիւնը ճշուածների, թշուառացածների և դառնա-
 ցածների շրջանում:

ԱՏՐՊԵՏ

(Գր շարունակուի)